

ԲՈՂԻԼ

Պատմուածք Նառմքերգի.

Տիեզերքի անհուն տարածութեան մէջ ոլանում էր հրեշտակը: Ահա քանի՛, քանի տարի է, որ նա չէ ծալել իւր թեւերը. քանի՛, քանի տարի է, որ թռչում ու թռչում է առանց հանգիստ տռնելու:

Որտեղ հանդիպում էր արեգակի, աստղի կամ քալ-լամուր մոլորակի, կանգ էր առնում և հարցնում.

—Ասացէք, խնդրեմ, չգիտէք որտեղ է գտնուում երկիրը:

Եւ հէնց որ իւր հարցի պատասխան ոռչո-ը կլսէր, կողանար հեռուն:

Ափսոս էր կորցրած րոպէն, ափսոս էր աւելորդ ման-ըերորդ վատնել:

Սրդէն վազնւց, շատ վաղուց էր լսել հրեշտակը երկրի վրայ ապրող մարդկանց թշուառութիւնների մասին, նոցա անտանելի տանջանքների ու դժբախտութիւնների մասին: Եւ հրեշտակի սիրտը զեղուն էր ալդ կարեկցութեամբ: Նա լարով ծունկ խոնարհեց Տիրոջ առաջ և մարդիկների համար բախտ հայցեց: Եւ Աստուած լսեց նորա պաղատանքը և նորան լանձնեց բաղտը, որպէս երկիր տանէր՝ թշուառ մարդիկներին հասցնելու համար: Այն ժամանակ հրեշտակն իշաւ եօթներորդ երկնքից, և ահա նա թափառկոտ քայլերով պատում է արեգակների, աստղերի և մոլորակների մէջ և երկիրն է որոնում:

Աջ ձեռքի մէջ բռնած է բաղտը: Նորա ձիւնա-փայլ թեւերը թեթևակի շարժում են թափանցկէն ե-թերի մէջ: Սրդէն հազարաւոր տարիների շրջան է գլո-րուել, միլիոնաւոր դրութիւններ իւր լեռնեն է թողել

և ոչ ոք մինչեւ այժմ դեռ չէ ասել նորան, թէ որտեղ
է գտնւում երկիրը իւր դժբախտ արարածներով։ Ժամա-
նակ առ ժամանակ լուսահատութեան արցունք է ցայ-
տում, գլորւում հրեշտակի աչերից։ «Ո՞, ով գիտէ, ար-
դեօք իւր սրաթե թեւերը իրեն հեռու, հեռու չեն
տանում երկրից։ Բայց չպէտք է մոռանանք, որ նա
այնուամենայնիւ հրեշտակ է, նա նպատակ է դրել՝ օդ-
նել խեղճ, թշուառ, տանջուող մարդկութեանը։ Նորա
աղի արցունքների պատճառը իւր անվերջ թափառուն
կեանքը չէ և ոչ էլ յօդնութիւնը։ Ո՞չ։ Այդ աղի ար-
ցունքները նորա աչքերից խողը մարդկալին տանջանքն
է և այն մարդկութիւնը, որ բաղտի ծարաւով է պա-
պակում, այն բաղտի, որ հրեշտակը կրում է իւր աջ
ձեռքում։

- Սաացէք, խնդրեմ, չգիտէք որտեղ է երկերը իւր
թշուառ բնակիչներով։

—Ոչ։

Եւ նա սլանում է հեռու, ոգևորուած իւր գաղա-
փառով։ Խակ աշխարհն այդ ժամանակ և վերանորոգւում
և զառամտում է. փոփոխուում են մարդիկը, լաջորդում
են գաղափարները, ձգտումները և կրօնները։ Բայց
թշուառութիւնը անձնիշխան թագաւորում է աշխար-
հում՝ ամեն տեղ։

—Ո՞ւր է բաղտը, հեծում են խեղճերը և տան-
ջուող մարդկութիւնը։

* * *

Միանգամ ծերունի աստղաբաշխը դիտում էր մի թա-
փառուն մոլորակ. նա աչք չէր հեռացնում դիտակից,՝
անդադար պատելով թռչող մոլորակի լետեկից։ Երբ կա-
րիք էր զգում ուտելու կամ քնելու, նա այնուամենալ-
նիւ չէր ընդմիջում դիտողութիւնը, — այդպիսի ժամա-
նակ հօրը փոխարինում էր որդին։ Խակ ուտելուց կամ
քնելուց լետոյ նա կրկին սկսում էր դիտելը։

Մոլորակը սաստիկ զայրացել էր։

—Ի՞նչ է ուզում ինձնից այն ծերուկ վհօւկը։ Ի՞նչ
է նշանակում այս։ Ի՞նչ է, բան եմ գողացել, որ ինձ-
նից աչք չէ հեռացնում։

Բայց աստղաբաշխը շարունակում էր իւրը:

Մոլորակը բոլորովին ելաւ համբերութիւնից: Հոգեկան սաստիկ լուզումից նա պալթեց և կտոր-կտոր եղաւ:

Նորա մօտով սաւառնում էր հրեշտակը և հարցրեց իւր տխուր, բայց աղու ձայնով,

—Ասացէք, խնդրեմ, մոլորակ, չգիտէք որտեղ է գտնւում երկիրը իւր դժբաղտ բնակիչներով:

—Զեր կարծիքով երկրի վրայ մարդիկ են ապրում, սրդողած հարցրեց մոլորակը: —Այնտեղ միայն քաւթառ վհուկներ և երիտասարդ աւազակներ են ապրում:

—Ա՛խ, թշուառ մարդիկ, թախծալից հառաչում է հրեշտակը, —և այդ բոլորը լոկ միայն նորա համար, որ նոքա բաղտ չունին: Ոչ, մոլորակ, բարկանալ պէտք չէ, ատելութիւնը մեղք է...

Եւ բաղտը, որ կրում էր իւր աջ ձեռքում, ակընխըտիղ փալլեց ու ճառագալթեց: Նոյն խոկ մոլորակն էլ կարծէք զուարթացաւ, և նորա մարդատեաց հոգին լուսաւորուեցաւ:

—Որտեղ է երկիրը:

Մոլորակը մի երկար, մեծ տըցակ շողերով ցոյց տուեց երկրի տեղը:

—Ա՛խ, որչափ հեռուն է պտտում երկիրը երկընքից, մեղմիկ հառաչեց հրեշտակը, —և այդ բոլորն առաջ է գալիս այն պատճառով, որ այնտեղ՝ երկրի վրայ բաղտ չկայ:

Եւ նա իսկոյն ճանապարհ ընկաւ, ոլացաւ հեռուն: Այն ինչ երկրից աստղաբաշխը տեսաւ հեռադիտակով հրեշտակին և նորա աջ ձեռքում ինչ որ փալլուն բան նշմարեց: Եւ որովհետեւ մի ժամանակ մարդարէն նախագուշակել էր, որ հրեշտակ պիտի գալ բաղտի հետ, ուստի և աստղաբաշխը հասկացաւ, որ այդ հրեշտակը մարդկանց բաղտ է բերում: Եւ իսկոյն բոլոր լրադիրներն այդ լուրը աշխարհի ամեն մի ծալը հասցըին:

—Հրեշտակ է գալիս բաղդով ծանրաբեռնուած, իսոսում էին ամեն տեղ, ուր միայն մարդկային բերան կար:

Բոլոր աստղաբաշխները շտապեցին իրենց դիտակների մօտ և տեսան, թէ ինչպէս հրեշտակը հետզհետէ երկիլ էր իջնում:

Նոքա սկսեցին հաշուել, —և հաշուեցին, որ այս ինչ օրը, այս ինչ ժամ ու ըուպէին, այն ինչ տեղը հրեշտակը ոտք կը գնի երկիր:

Երբ հասաւ որոշեալ օրը, աշխարհիս բոլոր ծալրերից մարդիկ հաւաքուեցան ալդ տեղը:

Շուտով տեղը շատ նեղ եկաւ: Սկսուեցաւ սաստիկ հրհջումն, բարձրացան կոիւ ու վէճ, լսուեցան հոլիստիւններ, իսկ դորան հետևեցին բռունցքները... Վերջապէս բանն ալնտեղ հասաւ, որ սկսեցին սրերով խոցոտել միմետնց ու սպանել:

Մարդկալին արեան հեղեղ էր վազում ալդ տեղ: Զարդուածների լաց ու կոծը, մեռնողների վայնասունը երկինք էր բարձրանում...

Հրեշտակը տեսաւ, թէ ինչպէս մարդէկ իրար հըրմբաշում և ոտնատակ են անում և վերևից սկսեց կանչել՝ իւր ուժերի մնացորդը ժողովելով.

— Մի կոուէք: Ամենքիդ ևս բաժին կհասնի իմ բերած բաղտից: Բայց չէին լսում:

Եւ երբ հրեշտակը մօտեցաւ երկին և տեսաւ մեռնողներին և վիրաւորուածներին, երբ լսեց ալդ լացն ու կոծը, այն ժամանակ նորա հեղիկ աչքերից արցունքի շիմեր գլորուեցան և ընկան բաղտի վրայ:

Ալդ օրուանից փայլուն բաղտի վրալ բծեր գոյացան:

* * *

Ասում են, թէ հրեշտակը, որ առանց այն էլ լոգնած էր երկար ճանապարհորդութիւնից, — ուշաթափ եղաւ երկրի վերալ տեսած բաներից և բաղտը վայր ընկաւ նորա ձեռքից:

Բաղտը լավշտակեցին նոքա, որոնք այն տեղին ամենից մօտիկ էին կանգնած: Նոքա մինչև ալսօր էր բաղտաւոր են: